# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**«ՄՖ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Արմավիրի մարզի Հոկտեմբերյանի խմբի ԱԿԳԽ հանքավայրի Ջանֆիդա տեղամասի շահագործման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսման (2-րդ լսում)**

27.10.2025թ

Ջանֆիդա բնակավայր

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ սահմանված կարգով 2025թ. հոկտեմբերի 27-ին, ժամը 12:00-ին Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ջանֆիդա բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ Արմավիրի մարզի Հոկտեմբերյանի խմբի ԱԿԳԽ հանքավայրի Ջանֆիդա տեղամասի շահագործման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Գոհար Մինասյանը, Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ Արման Բեգլարյանը, Մեծամորի համայնքապետարանի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Վանուշ Ղազարյանը, Ջանֆիդա բնակավայրի ներկայացուցիչ Վահան Հովհաննիսյանը, նախագծող Մանվել Հարությունյանը, «ՄՖ Քոնսթրաքշն ՍՊԸ ընկերության ներկայացուցիչ Վահագն Ավետիսյանը, համայնքի բնակիչներ:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Գոհար Մինասյանը, ով հանդես եկավ բացման խոսքով, ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Ներկայացվեց, որ համաձայն Օրենքի նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Ա կատեգորիայի գործունեության տեսակ, որ փորձաքննական գործընթացի ժամկետը սահմանվում է 80 աշխատանքային օր, որ այս փուլից հետո, օրենքով սահմանված կարգով տրվելու է պետական փորձաքննական եզրակացություն:

Հաշվետվությունն օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններին կարծիքներ ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, օրենքով և կառավարության որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային լսումներ: Այս հանրային լսումն օրենքով 2-րդն է: Հանրային լսումների վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող թերթում, փակցվել է մարզպետարանի, Մեծամորի համայնքապետարանի շենքում փորձաքննական կենտրոնի և համայնքապետարանի պաշտոնական կայքերում:

Այնուհետև փորձաքննական կենտրոնի մասնագետը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, շրջակա

միջավայրի վրա ազդեցությունները, մեղմող միջոցառումները, մշտադիտարկումները:
Գոհար Մինասյանն անդրադարձավ մթնոլորտային օդի պահպանության միջոցառումներին, ռեկուլտիվացիոն աշխատանքներին, ռեկուլտիվացվող տարածքի մակերեսի վերաբերյալ նախագծող Մանվել Հարությունյանը պարզաբանեց, Ռեկուլտիվացիայի հաշվարկը կատարված է միայն բացահանքը սպասարկող տարածքի համար 1,17հա մակերեսով, որի մեջ ներառված են արտադրական հրապարակը և գրունտային ճանապարհային ցանցը: Բացահանքերի տարածքը չի ռեկուլտիվացվում, քանի որ շահագործումից հետո գայանալու է ջրածածկ տարածք:

Գոհար Մինասյանը հարցրեց որ հաշվետվությունում գրել եք որ հանքավայրը գետադողողատային տիպի է, ապա որ գետի ողողատների մասին է խոսքը, արդյոք պաշարները վերականգնվող են: Մանվել Հարությունյանը պատասխանեց, որ Հանքավայրի պաշարները վերականգնվող չեն, ներկայումս որևէ գետի ողողատ չի հանդիսանում, նախկինում եղել է Արաքս գետի նախկին հունը:
Գոհար Մինասյանը ներկայացրեց նաև հաշվետվության վերաբերյալ դիտողությունները, կապված թափոնների, մշտադիտարկման աշխատանքների, մեղմող միջոցառումների վերաբերյալ, ապա խոսքը փոխանցեց նախագծող Մանվել Հարությունյանին, ով մանրամասն ներկայացրեց նախատեսվող գործունեությունը, ապա Գոհար Մինասյանը ներկայացրեց, որ համաձայն ջրային օրենսգրքի 37.1 հոդվածի 13-րդ կետի Արարատյան դաշտի՝ Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի ղեկավարի սահմանած Արարատի և Արմավիրի մարզերի համայնքներում արգելվում է նոր հորատանցքերի միջոցով, իսկ ձկնաբուծական նպատակներով՝ նաև գործող հորատանցքերի միջոցով նոր ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումը, եթե ջրավազանային կառավարման պլաններով այլ բան նախատեսված չէ, ինչպես նաև Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի ղեկավարի 2024թ-ի հունիսի 5-ի 198-Ն հրամանի՝ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ջանֆիդա բնակավայրում արգելվում է նոր հորատանցքերի հորատումը:
Մանվել Հարությունյանը պարզաբանեց, որ ունեն Վելլիա Ջուր ՓԲԸ-ի հետ կնքած պայմանագիր նոր հորատանցք չեն հորատելու, խմելու ջուրը նախատեսվում է բերել շշալցված, իսկ տեխնիկական նպատակով ջուրը բերվելու է ավտոցիստեռնով:
Այնուհետև Գոհար Մինասյանը հարցրեց, թե արդյոք այլ հարցեր չունեն, ինչին բնակիչները կողմ արտահայտվեցին, ասելով որ շատ ուրախ են, նոր աշխատատեղեր կբացվեն: Արման Բեգլարյանը հարցրեց թե համայնքին ինչ սոցիալական օգնություն են նախատեսել, ինչին Մանվել Հարությունյանը պատասխանեց սպառիչ: Ամփոփելով հանրային լսման արդյունքները՝ մասնակիցները որոշեցին հավանություն «ՄՖ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Արմավիրի մարզի Հոկտեմբերյանի խմբի ԱԿԳԽ հանքավայրի Ջանֆիդա տեղամասի շահագործման աշխատանքներին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ՝ Գոհար Մինասյան

«ՄՖ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի տնօրենի տեղակալ Վահագն Ավետիսյան